

Հարցազրույց

Ֆրանսիայի Հանրապետության Նախագահի հետ

"Հայաստանի Հանրապետություն" թերթում

**1- Պարոն Նախագահ՝ ձեր Հայաստան պետական այցելության առիթով,
թույլ կտա՞ք ձեզ հարցնելու, թե ինչպե՞ս եք գնահատում Հայաստանի և
Ֆրանսիայի հարաբերությունների ներկա դրությունը և ապագան :**

**Հայ-Ֆրանսիական հարաբերությունների պատմությունը յուրահատուկ է :
Նրա արմատները սկսում են խաչակրաց արշավանքների հեռավոր անցյալում,
այն վաղ ժամանակներից, երբ Երուսաղեմի թագավորը՝ Բուլոնիայի Բողոլեն
ամուսնացավ հայ իշխանուհի Արդա-ի հետ : Այդ ժամանակներից ի վեր այս
պատմությունը հյուսվեց աշխարհի պատմության ելևէջների հետ՝ առաջին
համաշխարհային պատերազմը, ցեղասպանության որբերգությունը,
կայսրությունների անկումը, երկրորդ համաշխարհային պատերազմի
համատեղ պայքարները : Անկասկած այս եզակի պատմության որպես**

արդյունք, մեր երկու ժողովուրդների միջև ստեղծվել է յուրահատուկ

համակրանք : Մենք սիրում ենք նույն բաները՝ ազատությունը,

անկախությունը, հոգևորությունը և հոգեկան իմաստությունը արվեստի և

մշակույթի մեջ, մեր լեզուների գեղեցկությունը և սրբությունը :

Ներկա դրությունը, դա վերոհիշյալ բնական համակրանքն է, բայց այն

միաժամանակ մոտ 500000 Ֆրանսիացիներն են որոնք իրենց արմատները

ընկղմում են հայկական հողի մեջ : Նրանք Ֆրանսիային բերել են իրենց

քաջությունը, իրենց տաղանդը, իրենց վեհանձնությունը : Միաժամանակ,

նրանք մնացել են կապված Հայաստանին : Նրանք նպաստում են մեր

հարաբերություններին տալու իր բոլոր ուժգնությունը : Նրանք

մասնակցում են համագործակցության հազարավոր նախագծերին : Մի

օրինակելի հաջողություն՝ ինչպես Հայաստանում Ֆրանսիական

Համալսարանը - Հ.Ֆ.Հ. -ն - այսպիսով օգտվում է ոչ միայն ֆրանսիական

կառավարության աջակցությունից, բայց նաև մի ամբողջ ցանցի

գործունեությունից ուր շատ գործունյա դեր են կատարում հայկական

ծագումով Ֆրանսիացիները և նրանց ապրած քաղաքների, մարզերի,

շրջանների հաստատութիւնները, ինչպես օրինակի համար, Լիոն-Յ

համալսարանը :

Ապագայի հարաբերութիւնների համար մեր բարեկամութիւնը Հայաստանի

հետ մեզ դնում է պատասխանովութեան առջև : Յրանսիան կամենում է

ընկերակցել Հայաստանին իր քաղաքական արդիականացման ընթացում, իր

հանրային ազատութիւնները երաշխավորող օրինաց պետութեան կառուցման

կամեցողութեանը: Նա պատրաստ է աջակցել իր տնտեսութեան

արդիականացմանը և զանազանացմանը, որպէզի Հայաստանը կարողանա իր

զավակները համար կառուցել ավելի լավ ապագա:

Այսպիսի հին ազգ ինչպես ձերն է չպետք է երկյուղի ապագայի

ճանապարհները վերցնելուց : Հատկապես դիմելով երիտասարդութեան, ես

ուզում եմ ասել նրան, թե ինչ բախտավորութիւն ունի պատկանելու մի հին

ազգի, ունենալով մի լրիվ նոր երկիր կառուցելու առիթը: Հայաստանը

արժանի է որպէսզի նրան տրամադրվեն բոլոր ուժերը և ամենամեծ

երջանկութիւնն ու հաջողութիւնը դա իր երկրին լավ ծառայելն է :

2 - Հայաստանը համակրվեց Եվրոմիության Նոր Հարևանության

քաղաքականությանը : Դուք ինչպե՞ս եք տեսնում Հայաստանի և

Եվրոմիության հարաբերությունների ապագան :

Եվրոմիության վերջին ընդլայման հետևանքով որը մոտեցրեց Կովկասը

Եվրոմիության սահմաններին, Հայաստանը ինչպես և իր երկու հարևանները

հարավային Կովկասում, 2004-ի հունիսին համակրվեցին Նոր

Հարևանության քաղաքականության մեջ: Դա Եվրոմիության համար առիթ

էր շեշտելու իր աջակցությունը սկսված բարեփոխումների ընթացին և

խուսափելու մեր համընդհանուր տարածաշրջանում նոր բեկումների և

բաժանումների նոր աղբյուրների երևան գալուց:

Այս հարաբերությունները Հայաստանի և Եվրոմիության միջև դեռ

երիտասարդ են : Բայց սա առաջին փուլն է : Հայաստան-Եվրոմիության

գործունեության ծրագրի մասին բանակցությունների մօտակա կնքումը

անկասկած թույլ կտա Հարևանության քաղաքականության լիովին

ծավալմանը :

Իմ համոզմունքը նա է, որ Եվրոմիություն եւ Հայաստանի միջև

հարաբերությունները աստիճանաբար կզարգանան և կդառնան Հայ-

Ֆրանսիական հարաբերությունների նման ավելի մտերիմ: Բայց պետք է

ուստնել ժամանակաշրջանները :

3 - Դուք աջակցում եք Թուրքիայի անդամակցմանը Եվրոմիությանը :

Արդյո՞ք Ֆրանսիան կպնդի Հայաստանի հետ սահմանների բացման և

հայկական ցեղասպանության ճանաչման համար :

Դուք գիտեք, ես կարծում եմ որ Եվրոմիության անդամակցության

հեռանկարը մի հիմնական ազդակ է Թուրքիային արևմուտքի հետ կապի

ճանապարհին պահելու համար՝ որտեղ որ նա ընտրություն է կատարել

մտնելու : Անդամակցությունը ինքնըստինքյան ենթադրում է որ պետք է

հարգել չափանիշները, բարեփոխումների որդեգրումը : Սա մի պահանջկոտ,

երկար և դժվար ճանապարհ է : Իմ համոզմունքը նա է, որ Եվրոմիության,

ինչպես նաև Հայաստանի շահն է տեսնել Թուրքիային հակված դեպի մեր

արժեքները, դեպի մեր մարդու իրավունքների, խաղաղության,

ժողովրդավարության ըմբռնումը :

Բազմիցս անգամ, Թուրքական իշխանությունների մոտ, ես բարեխոսել եմ

սահմանների բացման համար : Սակայն պարզ է, որ մի շատ ուժեղ կապ է

ստեղծվել այս հարցի և Լեոնային Ղարաբաղի ընդհարումի կարգավորման

մեջ և որ դրա կարգավորման առաջխաղացումը կարող է որոշիչ

ազդեցություն ունենալ այս հարցի վրա : Ես ձեզ ասել եմ : Ես կարծում եմ,

որ դա հնարավոր է այսօր :

Ինչ վերաբերվում է հայկական ցեղասպանությանը, որը որ կատարվել է

Օսմանյան կայսրության կողմից, Եվրոպան նախ և առաջ հաշտեցման,

խաղաղության, հարգանքի և ուրիշների նկատմամբ արտաբացման ջանք է,

որ միշտ և ամենուր վերածվել է հիշողության ջանքի : Նույնիսկ եթե սա մի

երկար և դժվարին ընթաց է, ես վստահում եմ Թուրքիայի կարողությանը՝

հասցնելու այս հիշողության պարտականությունը մինչեւ իր վերջին փուլը,

որովհետեւ սա Եվրոպական Կառուցման հենց հոգին ու միտքն է :

4 - Լեոնային Ղաղաբաղի մասին կարծում ե՞ք, որ հույս կա, որ կողմերը

հասնեն ընդհարումի կարգադրմանը :

Ես անձամբ պարտավորվել եմ Լեոնային Ղաղաբաղի ընդհարումի

կարգադրման համար, քանի որ ես գիտեմ այն տառապանքները, որ նա առաջ

բերեց, որովհետև խաղաղությունը դա միակ միջոցն է կառուցելու համար

ժողովրդավարություն և բարգավաճում շրջանի բոլոր ժողովուրդների համար

: Հայկական ուշիմությունը, տնտեսական ուժականությունը,

երկրառազմավարողական դիրքը, լիարժեք օգտակար կլինեն միայն բաց

սահմանների դեպքում և բոլոր հարեվանների հետ հարաբերությունների

կանոնավորման դեպքում : Բազմաթիվ անգամներ՝ Փարիզում, Քեյ-

Ուեստում, Ռամբուլեոում, ես տեսա հասանելի խաղաղությունը : Այսօր՝

ինչպես ասել եմ նախագահ Քոչարյանին ինչպես և նախագահ Ալիբեկին,

Մինսկի իմբի համանախագահների առաջարկությունները ինձ թվում են

պատշաճ, հավասարակշռված և ողջամիտ : Ուստի ես մի մաղթանք ունեմ, որ

Երևանում ինչպես և Բաքվում խաղաղության համար համարձակ քայլեր

վերցվեն : Այսօր, Տ Զարգացած Երկրների Գագաթնաժողովը միջազգային

համայնքը պատրաստ են երաշխավորելու խաղաղության համաձայնությունը

: Ինչ կլինի վաղը, դա անհայտ է : Այս առիթը չպետք է բաց թողնել :

5 - Ինչ կլինեն ձեր պատգամը Հայ ժողովրդին ձեր այցի նախօրյակին :

Այն խորին հարգանքը, որ ինձ ներշնչում է Հայ ժողովուրդը, իր

հասունությունը, իր իմաստությունը, ինձ կտարահամոզեյին բանաձևելու

ինչ որ կնմանվեր մի խորհրդի կամ մի հանձնարարության : Բայց քանի որ

դուք “պատգամ” բառն եք օգտագործում, թող նա լինի մի մաղթանք :

“Հայաստան իմ Բարեկամ” թող այս տարին նորից ուժեղացնի Հայաստանի և

Ֆրանսիայի միջև դարավոր բարեկամությունը, որ բազմաթիվ

Ֆրանսիացիներ գան բացահայտելու այս երկրի հոգին, իր տեսարանները, իր

վանքերը, նրա մշակույթը և նրա հյուրասիրությունը. թող մեր

բարեկամությունը նպաստի Հայերի և Հայուհիների իղձերի հաջողությամբ

կատարմանը :